

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵՏՍՐԻ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

«Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն իրականացնելու նպատակներով,

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում մաքսային կարգավորումն ապահովելու նպատակներով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագիրը սահմանում է՝

Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրի (այսուհետ՝ Միասնական ռեեստր) վարման կարգը,

հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտները, ապրանքային նշանները և սպասարկման նշանները (այսուհետ՝ մտավոր սեփականության օբյեկտներ) Միասնական ռեեստրում ընդգրկելու կարգը,

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև, ինչպես նաև իրավատերերի կամ նրանց շահերը ներկայացնող անձանց (այսուհետ՝ իրավատեր), պետական մարմինների, այլ կազմակերպությունների, հաստատությունների և քաղաքացիների հետ՝ Միասնական ռեեստրի վարման հարցերով փոխգործակցության վերաբերյալ կարգը:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ կենտրոնական մաքսային մարմիններ են հանդիսանում. Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Բելառուսի Հանրապետության կողմից՝ Պետական մաքսային կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության կողմից՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային հսկողության կոմիտեն, Ռուսաստանի Դաշնության կողմից՝ Դաշնային մաքսային ծառայությունը:

(2-րդ հոդվածը լրաց. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

Հոդված 3

1. Իրավատիրոջ դիմումի հիման վրա Միասնական ռեեստրում ընդգրկվում են Մաքսային միության անդամ պետություններից յուրաքանչյուրում իրավական պահպանության ենթակա մտավոր սեփականության օբյեկտները:

2. Այն իրավատերը, որը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Մաքսային միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման առնչությամբ կամ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հետ այլ գործողություններ կատարելիս կարող է տեղի ունենալ իր իրավունքների խախտում՝ մտավոր սեփականության ոլորտում Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությունների և (կամ) Մաքսային միության օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունի դիմում ներկայացնելու մտավոր սեփականության օբյեկտը Միասնական ռեեստրում ընդգրկելու մասին:

3. Դիմումը գրավոր ներկայացվում է Մաքսային միության անդամ պետություններից մեկի կենտրոնական մաքսային մարմին: Տեխնիկական հնարավորության առկայության դեպքում դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային ձևով:

Դիմումը ներկայացվում է մեկ իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) անունից, մտավոր սեփականության օբյեկտների մեկ տեսակի առնչությամբ: Մեկ դիմումի մեջ չի թույլատրվում միաժամանակ տվյալներ նշել մտավոր սեփականության օբյեկտների տարբեր տեսակների մասին, եթե նույնիսկ մտավոր սեփականության այդ օբյեկտները պատկանում են մեկ իրավատիրոջը (միևնույն իրավատերերին):

Այն անձը, որը ներկայացնում է տարբեր իրավատերերի շահերը մտավոր սեփականության տարբեր օբյեկտների մեկ տեսակի մասով, պետք է առանձին դիմումներ ձևակերպի տարբեր իրավատերերին:

պատկանող՝ մտավոր սեփականության տարբեր օբյեկտների առնչությամբ:

4. Մաքսային միության մաքսային տարածքում մշտական ներկայացուցչություն չունեցող իրավատիրոջ անունից դիմումը կարող է ներկայացվել Մաքսային միության անդամ պետություններից որևէ մեկի տարածքում մշտական գտնվելու վայր ունեցող (գրանցված) անձանց միջոցով:

Հոդված 4

1. Դիմումը պետք է ներառի տվյալներ՝

իրավատիրոջ մասին, իսկ նրա ներկայացուցչի կողմից այն ներկայացնելու դեպքում՝ նաև նրա ներկայացուցչի մասին,

մտավոր սեփականության օբյեկտի մասին,

այն ապրանքների մասին, որոնց տեղափոխումը Մաքսային միության մաքսային սահմանով կամ մաքսային հսկողության տակ գտնվող այդ ապրանքների հետ իրականացվող այլ գործողություններ իրավատիրոջ կարծիքով հանգեցնում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պահպանվող իր իրավունքների խախտմանը՝ այնքան մանրամասնեցված, որքան անհրաժեշտ է մաքսային մարմինների կողմից դրանք հայտնաբերելու հնարավորությունն ապահովելու համար (ապրանքների արտաքին տեսքի նկարագրություն (դրանց փաթեթավորումը, պիտակները և այլն)),

իրավատիրոջ կողմից լիազորված ներմուծողների, արտահանողների մասին,

ապրանքների ծածկագրերի մասին՝ առնվազն առաջին չորս նիշի մակարդակով՝ Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան,

այն ապրանքների ներմուծման ենթադրյալ վայրերի մասին, որոնց տեղափոխումը Մաքսային միության մաքսային սահմանով կամ մաքսային հսկողության տակ գտնվող այդ ապրանքների հետ իրականացվող այլ գործողություններ իրավատիրոջ կարծիքով հանգեցնում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պահպանվող իր իրավունքների խախտմանը, ինչպես նաև այդ ապրանքները ներմուծողների (արտահանողների) մասին, եթե այդպիսի տեղեկություններ առկա են,

մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավատիրոջ իրավունքների պաշտպանության ժամկետի մասին:

Նշված տվյալները կարող են ձևակերպվել այդ տվյալները հավաստող փաստաթղթերի պատճենների տեսքով: Փաստաթղթերի պատճենները ներկայացնելիս կարող են պահանջվել դրանց բնօրինակները, որոնք պատճենների համապատասխանությունը դրանց հետ ստուգելուց հետո վերադարձվում են:

2. Մտավոր սեփականության օբյեկտներին առնչվող և նկարագրական բնույթ կրող կամ որևէ տվյալների ցանկ կամ շտեմարան հանդիսացող առանձին տվյալները կարող են լրացուցիչ կերպով փոխանցվել էլեկտրոնային ձևով՝ նյութական կրիչի վրա կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

3. Դիմումին կից ներկայացվում են փաստաթղթեր, որոնք հավաստում են Մաքսային միության անդամ պետություններից յուրաքանչյուրում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի առկայությունը (վկայագրեր, իրավունքների փոխանցման մասին պայմանագրեր (այդ թվում՝ լիցենզային), այլ փաստաթղթեր, որոնք իրավատերը կարող է ներկայացնել ի հավաստումն Մաքսային միության անդամ պետություններից յուրաքանչյուրում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների առկայության՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան), ինչպես նաև դիմումի մեջ նշվող տվյալները հավաստող փաստաթղթեր:

Իրավատերը կարող է դիմումին կից ներկայացնել այն ապրանքների նմուշները, որոնք կարող են հիմք ծառայել իր իրավունքների՝ իր կարծիքով տեղի ունեցած խախտման փաստը հաստատելու համար:

4. Եթե դիմումը ներկայացվում է իրավատիրոջ շահերը ներկայացնող անձի կողմից, ապա դիմումին կցվում է նաև իրավատիրոջ կողմից այդ անձին տրամադրված լիազորագիրը: Լիազորագիրը պետք է գործի Մաքսային միության ամբողջ տարածքում:

Եթե Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում մտավոր սեփականության միևնույն օբյեկտի նկատմամբ իրավունքները պատկանում են տարբեր իրավատերերին, ապա դիմումին պետք է կցվեն իրավատերերից յուրաքանչյուրի կողմից տրված լիազորագրերը:

5. Դիմումը և դրան կցվող փաստաթղթերը ներկայացվում են ռուսերենով կամ այլ լեզվով: Փաստաթղթերն այլ լեզվով ներկայացնելու դեպքում դիմումին կից ներկայացվում է դրանց ռուսերեն թարգմանությունը:

6. Դիմումի հետ միաժամանակ ներկայացվում է իրավատիրոջ՝ այն գույքային վնասը հատուցելու գրավոր պարտավորությունը, որը կարող է պատճառվել հայտարարատուին, սեփականատիրոջը, ապրանքներն ստացողին կամ այլ անձանց՝ ապրանքների բացթողումը կասեցնելու առնչությամբ:

Եթե Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում մտավոր սեփականության միևնույն օբյեկտի նկատմամբ իրավունքները պատկանում են տարբեր անձանց, ապա դիմումին պետք է կցվի իրավատերերից յուրաքանչյուրի պարտավորությունը:

7. Իրավատերը (նրա ներկայացուցիչը) պարտավոր է անհապաղ տեղեկացնել դիմումում կամ դրան կցվող փաստաթղթերում նշված տվյալների փոփոխությունների մասին:

8. Եթե դիմումը չի պարունակում սույն Համաձայնագրով նախատեսված փաստաթղթերը և տվյալները, ապա կենտրոնական մաքսային մարմիններն իրավասու են իրավատիրոջից (նրա ներկայացուցչից) պահանջելու որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և տվյալները:

Մեկամսյա ժամկետում այդպիսի փաստաթղթեր և տվյալներ չներկայացնելու դեպքում Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմիններն իրավասու են մերժելու դիմումի ուսումնասիրումը:

Հոդված 5

1. Դիմումի ուսումնասիրումը և որոշումների ընդունումը՝ Միասնական ռեեստրում մտավոր սեփականության օբյեկտներ ընդգրկելու մասին, Միասնական ռեեստրում մտավոր սեփականության օբյեկտների ընդգրկումը մերժելու մասին, Միասնական ռեեստրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Միասնական ռեեստրում ընդգրկելու ժամկետը երկարաժամկետային մասին, Միասնական ռեեստրից մտավոր սեփականության օբյեկտներ հանելու մասին իրականացվում է «Մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրը վարելու հարցերով Մաքսային միության անդամ պետությունների միջև համագործակցության մասին» կանոնակարգին (այսուհետ՝ Կանոնակարգ) համապատասխան:

Կանոնակարգը հաստատվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ:

2. Մաքսային միության հանձնաժողովը սահմանում է Միասնական ռեեստրը վարելու համար լիազորված մարմինը:

Հոդված 6

1. Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված պարտավորության կատարումը երաշխավորելու նպատակներով իրավատերը պարտավոր է մտավոր սեփականության օբյեկտները Միասնական ռեեստրում ընդգրկելու մասին որոշում կայացնելու վերաբերյալ ծանուցումն ուղարկելու օրվանից մեկ ամսվա ընթացքում ներկայացնել ապրանքների բացթողումը կասեցնելու հետ կապված անձանց գույքային վնաս պատճառելու համար պատասխանատվությունն ապահովագրելու վերաբերյալ պայմանագիր (պայմանագրեր), որը (որոնք) իրավաբանական ուժ ունի (ունեն) Մաքսային միության բոլոր անդամ պետություններում:

Ընդ որում, ապահովագրական գումարը պետք է լինի 10 (տասը) հազար եվրոյից ոչ պակաս:

2. Մաքսային մարմիններում իրավատիրոջ շահերը ներկայացնելու համար պատշաճ կերպով ձևակերպված լիազորագրի կամ այդպիսի լիազորությունները պատվիրակող այլ փաստաթղթի առկայության դեպքում պարտավորությունը և գույքային վնաս պատճառելու համար պատասխանատվությունն ապահովագրելու վերաբերյալ պայմանագիրը (պայմանագրերը) կարող է (են) ձևակերպվել և ներկայացվել իրավատիրոջ ներկայացուցչի կողմից:

3. Գույքային վնաս պատճառելու համար պատասխանատվությունն ապահովագրելու պայմանագիր (պայմանագրեր) չներկայացնելու դեպքում որոշում է կայացվում Միասնական ռեեստրում ընդգրկումը մերժելու մասին, որի մասին դիմողը գրավոր ծանուցվում է այդպիսի որոշում ընդունելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Միասնական ռեեստրում մտավոր սեփականության օբյեկտներ ընդգրկելու համար վճար չի գանձվում:

5. Միասնական ռեեստր մուտքագրված մտավոր սեփականության օբյեկտների ցանկը հրապարակվում է Մաքսային միության հանձնաժողովի և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների պաշտոնական հրատարակություններում և համացանցի պաշտոնական կայքերում:

Հոդված 7

Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավատիրոջ իրավունքների պաշտպանության ժամկետը, որը սահմանվում է Միասնական ռեեստրում ընդգրկելիս, չի կարող գերազանցել Մաքսային միության այն անդամ պետությունում մտավոր սեփականության օբյեկտի իրավական պահպանության ժամկետը, որում այդ ժամկետը լրանում է ավելի վաղ:

Հոդված 8

1. Կողմերի միջև կնքվող՝ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցություններ ու խորհրդակցություններ անցկացնելու միջոցով:

2. Եթե վեճի կողմերը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով վեճը չեն կարգավորում դրանց անցկացման վերաբերյալ՝ վեճի մի կողմից վեճի մյուս կողմին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը, եթե վեճի կարգավորման եղանակների վերաբերյալ վեճի կողմերի միջև այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:

3. Մաքսային միության հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

Հոդված 9

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի մայիսի 21-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված պատճենը:

**Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)